



Աշխատություն 02(07), Փետրվար 2007, Երևան, Հայաստան
Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC)

ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Թողարկումը պատրաստվել է «Աջակցություն ԱՅԴԾ գործընթացին» ծրագրի շրջանակներում՝ ՄԱԿ-ի
Շարգացման Ծրագրի և Օքսֆամ ՄԲ աջակցությամբ:*

Սուբսիդիաները Հայաստանում

Ի՞նչ են սուբսիդիաները

Սուբսիդիաների ամբողջական դասակարգումը բավականին խրթին գործ է հանդիսանում: Սույն կյուբի շրջանակում մենք կկիրառենք սուբսիդիաների դասակարգման պարզեցված մոտեցում, ըստ որի սուբսիդիաներ կհամարվեն այն հանրային միջոցները, որոնք տրամադրվում են արտադրողին, ուղղակի կամ միջնորդավորված ձևով, ապրանքների և ծառայությունների գները շուկայականից ցածր պահելու համար: Սովորաբար սուբսիդավորված ապրանքի կամ ծառայության վերջնական գինը կազմում է ավելի պակաս, քան դա կլիներ առանց սուբսիդիաների:

Որո՞նք են սուբսիդիաների տրամադրման հիմնական պատճառները, և ինչպիսի՞ մոտեցումներ են որդեգրվել այս հարցի նկատմամբ տնտեսական կառավարման մոդելներում: Սուբսիդիաների տրամադրման թերևս ամենակարևոր պատճառը սոցիալական խնդիրն է, որն արտահայտվում է իշխանությունների կողմից այս կամ այն ապրանքի կամ ծառայության գների էժանացման միջոցով սոցիալական լայն խավերի համար այդ ապրանքի սպառման մատչելիության պահպանում կամ ընդլայնում: Խորհրդային տարիների պրակտիկան սրա ակնհայտ դրսևորումն էր, թեև դասական իմաստով այն ժամանակվա հատկացումները սուբսիդիա չեն համարվում, քանի որ գնագոյացումն ընդհանուր առմամբ կատարվում էր պետության կողմից, և սուբսիդիաները որպես առանձին բյուջետային հոդված չէին երևում և այսօր խիստ դժվար է գնահատել սուբսիդիաների ընդհանուր ծավալը ԽՍՀՄ ՀՆԱ-ի կազմում:

Սոցիալական խնդիրն (բայց ավելի լայն ձևակերպմամբ) է առնչվում նաև սուբսիդիաների տրամադրման մի այլ նպատակ, որը ձևակերպվում է որպես սուբսիդավորման միջոցով հասարակության համար ցանկալի արդյունքների ստացում: Այս դասակարգման տակ է գտնվում, օրինակ, հասարակական տրանսպորտի սուբսիդավորումը, որի դեպքում ոչ միայն ապահովվում է դրա մատչելիությունը սոցիալական բոլոր խավերի համար, այլ լուծվում է նաև հասարակական ընդհանուր այնպիսի բարիքի խնդիր, ինչպիսին է օդի աղտոտվածության նվազումը, տրանսպորտային ենթակառուցվածքների ծանրաբեռնվածության կարգավորումը:

Մյուս հանգամանքը, որը դրդում է սուբսիդիաների, արտադրողների պաշտպանությունն է արտաքին մրցակցությունից: Այս պրակտիկան լայնորեն կիրառվում է ինչպես հարուստ այնպես էլ ոչ հարուստ երկրների կողմից: Հարուստ երկրների դեպքում, սուբսիդիաների անհրաժեշտությունը հիմնականում առաջ է գալիս այն հանգամանքից, որ հարստության բարձր մակարդակի պայմաններում որոշ ճյուղեր, որտեղ գիտատեխնիկական բաղադրիչի դերն այնքան էլ մեծ չէ, սկսում են դառնալ ոչ շահութաբեր բարձր ծախսերի, հիմնականում թանկ աշխատուժի պատճառով՝ հատկապես հաշվի առնելով, որ աղքատ երկրում դրա արտադրությունը կարելի է ավելի էժան կազմակերպել: Այդ ճյուղերից ամենաակնհայտը գյուղատնտեսությունն է: Տարբեր մեկնաբաններ գտնում են, որ ազատ միջազգային առևտրի պայմաններում զարգացած երկրներում չի կարող գոյություն ունենալ գյուղատնտեսություն, քանի որ աղքատ երկրներից էժան սննդի արտահանման արդյունքում այդ ճյուղը զարգացած երկրներում պարզապես կդադարի գոյություն ունենալուց: Իսկ քանի որ սեփական սննդամթերքի արտադրությունը նաև ազգային անվտանգության խնդիր է,

ապա զարգացած երկրները տրամադրում են զանազան սուբսիդիաներ իրենց գյուղմթերքի արտադրողներին, որոնց շնորհիվ էլ նրանք կարողանում են գոյատևել:

Այստեղ կարևորն այն է, որ մի կողմից հարուստ երկրներում սուբսիդիաներ տրամադրելու «անհրաժեշտությունը» առաջանում է հենց հարուստ լինելու և աշխատուժի բարձր գին ունենալու արդյունքում, իսկ մյուս կողմից, սուբսիդիաների տրամադրումը դառնում է հնարավոր և ոչ այնքան ցավոտ ընդհանուր տնտեսության և պետական բյուջեների համար այն պատճառով, որ այդ երկրներում առկա են համապատասխան ռեսուրսներ և այդ երկրներում առկա է որոշակի կոնսենսուս միջոցների նման օգտագործման կապակցությամբ:

Շատ աղքատ և զարգացող երկրներ նույնպես պարբերաբար դիմում են տարբեր ճյուղերը սուբսիդավորելու գայթակղությանը: Շատ երկրներում դա դիտվում է որպես ռազմավարական ճյուղերի պահպանման և զարգացման միջոց: Բայց ցավոք, ի տարբերություն հարուստ երկրների դեպքի, աղքատ երկրներում սուբսիդիաները դառնում են որևէ արտոնյալ ոլորտներին ռեսուրսներ տրամադրելու մեխանիզմ, որը սովորաբար լինում է ոչ արդյունավետ և երկարաժամկետ հատվածում չի բերում դրական տնտեսական արդյունքի: Շատ հաճախ երկրներում սուբսիդիաների միջոցով զարգանում են ճյուղեր, որոնք կայուն չեն երկարաժամկետ հատվածում, որի արդյունքում տնտեսությունները ենթարկվում են խիստ շոկերի: Մյուս կողմից, աղքատ և զարգացող երկրներում շատ մեծ է սուբսիդիաների տրամադրման այլընտրանքային գինը: Այսինքն՝ այն միջոցները, որոնք տրվում են սուբսիդիաների, կարող էին ուղղվել շատ ավելի անհետաձգելի խնդիրների լուծմանը, ինչպես օրինակ՝ ներդրումներ մարդկային կապիտալում և ֆիզիկական ենթակառուցվածքներում:

Ազատական տնտեսական կառավարման մոդելը ենթադրում է սուբսիդիաների իսպառ վերացում: Դրա հիմնական արգումենտացիան այն է, որ սուբսիդիաներն առաջացնում են տնտեսական աղավաղումներ, ստեղծում են սխալ խթաններ, որ, արդյունքում, երկարաժամկետ հատվածի համար ավելի շատ գլխացավանք են ստեղծում, քան օգուտներ բերում: Շուկայական բարեփոխումների դասական փաթեթը ներառում է սուբսիդիաների հնարավորինս կրճատում և ապրանքների և ծառայությունների սակագների կամ գների այնպիսի մակարդակի ձևավորում, որը կենթադրի արտադրության ծախսածածկում:

Մյուս կարևոր փաստարկը սուբսիդիաների դեմ կայանում է նրանում, որ սոցիալական խնդիրներ լուծելու համար սուբսիդավորման միջոցով ցածր գների ապահովումը տնտեսապես լավ լուծում չի հանդիսանում, քանի որ սուբսիդիաներից շահում են բոլորը, նույնիսկ նրանք, ովքեր առանց դրա էլ խնդիրներ չունեն: Օրինակ, էլեկտրաէներգիայի գների արհեստական ցածր պահելը չի կարող արդարացվել այն հանգամանքով, որ աղքատները չեն կարողանում ամբողջ գինը վճարել այն պարզ պատճառով, որ աղքատներից ավելի շատ շահում են ոչ-աղքատները, քանի որ հենց նրանք են հիմնական ապրանքների սպառողները: Այսպիսով, սուբսիդավորման դասական քննադատությունը ենթադրում է, որ սուբսիդիաները պետք է փոխարինվեն նպատակային սոցիալական աջակցությամբ:

Այստեղ ակնհայտ է հակասություն բարեփոխումների առաջարկվող դասական փաթեթի և շատ զարգացած երկրների սեփական պրակտիկայի միջև, որը շատ քաղաքագետների

մղում է ենթադրության, որ զարգացած երկրներն իրենք են կիրառում սուբսիդիաներ՝ իրենց ազգային խնդիրները լուծելու համար, մինևույն ժամանակ միջազգային ֆինանսական կառույցների միջոցով ճնշում են զարգացող երկրներին, որպեսզի վերջինները վերացնեն իրենց սուբսիդիաները: Չնայած այս քննադատությունը ինչ-որ առումով ունի ապրելու իրավունք, հատկապես, եթե խոսքը գնում է միջազգային առևտրի սուբսիդավորման մասին, պետք է հիշել, որ որպես կանոն զարգացող երկրները բնութագրվում են նաև ծայրահեղ վատ կառավարմամբ և դրանից բխող կաշառակերության բարձր մակարդակով: Նման կառավարությունները սովորաբար ի վիճակի չեն հստակ ձևակերպել ազգային խնդիրները և արդյունավետ իրականացնել դրանց հասնելու միջոցառումները: Սուբսիդիաների նման զգայուն խնդիրը, որը պարունակում է տնտեսական աղավաղումների, ռեսուրսների չարաշահման, ի վնաս պետական շահերի մասնավոր շահերի հետապնդման ռիսկեր, ենթադրում է շատ ավելի կայացած տնտեսական և պետական համակարգի առկայություն, որը կիրականացնի այս գործընթացը: Ցավոք, շատ զարգացող երկրներ, որոնց թվում կարելի է նաև դասել Հայաստանը, դեռևս չունեն նման ինստիտուցիոնալ հասունություն, որի պայմաններում խիստ զգուշավոր պետք է մոտենալ սուբսիդիաների ցանկացած որոշման: Սա թերևս կարող է ծառայել որպես «արդարացում» տարբեր երկրներում տարբեր մոտեցումների թույլատրելիության տարբեր աստիճանների

Քննարկենք 1 օրինակ: Եթե զարգացած երկրներում շատ տարածված է հասարակական տրանսպորտի պետական սեփականությունը և այս ոլորտի սուբսիդավորումը, ապա զարգացող երկրներին առաջարկվում է հնարավորինս չափ սեփականաշնորհել այս ծառայությունները, քանի որ այս հիմնարկներում սովորաբար առկա կոռուպցիայի մեծ ծավալները տվյալ ճյուղի սուբսիդավորումը դարձնում են այնքան թանկ, որի դեպքում արդեն դրված նպատակը դառնում է տնտեսապես անշահավետ: Նույնը կարելի է ասել նաև մասնավոր տնտեսվարողներին վճարվող սուբսիդիաների գծով: Շատ դժվար է պատկերացնել, որ կոռումպացված համակարգի պայմաններում հնարավոր լինի այնպես կարգավորել պետություն-տնտեսվարող սուբյեկտ հարաբերությունը, որը ռեսուրսների վատնում, կամ անարդարացի դրսևորումներ տեղի չունենան: Վերջի վերջո սուբսիդիաները դա ռեսուրսների տրամադրում է, որի արդյունավետությունը կախված է նրանից թե իրականում ինչ կա դրա իրականացնողների մտքերում և ինչպիսին է նրանց մոտիվացիան:

Հայաստանի տնտեսական բարեփոխումների ընթացքն անկախացումից մինչև 2006 թվականն ընկած ժամանակահատվածում

Ըստ երկրան սուբսիդիաների գծով պետության քաղաքականության փոփոխությունը հանդիսացել է վերջին 15 տարիներին Հայաստանի տնտեսական բարեփոխումների կարևորագույն առանցքներից մեկը:

Խորհրդային տարիներին շատ ապրանքներ և ծառայություններ սուբսիդավորված էին, գները ֆիքսված էին պետականորեն, չէին արտացոլում դրա վրա կատարված ծախսերը, իսկ ձեռնարկությունների վնասները փոխհատուցվում էր պետության կողմից կապիտալի համալրման և ներդրումների համար կենտրոնացված միջոցներ տրամադրելու ճանապարհով: Սուբսիդիաների հիմնական մասի վերացումը տեղի ունեցավ շուկայական բարեփոխումների առաջին իսկ փուլում՝ 1991-92 թվականներին, երբ տեղի ունեցավ հիմնական ապրանքների և ծառայությունների գների ազատականացում:

Դրանով, սակայն, սուբսիդիաները Հայաստանում իսպառ չվերացան: Հանրային հիմնական ծառայությունների սակագները դեռևս չէին արտացոլում դրանց արտադրման վրա կատարված իրական ծախսերը, որի արդյունքում անհրաժեշտություն էր առաջանում պարբերաբար բյուջետային հատկացումներ անել: Այդ հանրային ծառայություններն էին էլեկտրաէներգիան, խմելու և ոռոգման ջուրը և ջեռուցումը:

Թաքնված սուբսիդիաները

Բացի ցածր սակագների սահմանումից, որն արդեն իսկ ենթադրում է սուբսիդավորման անհրաժեշտություն, Հայաստանում վերջին տարիներին առկա էր վերը նշված հանրային ծառայությունների դիմաց վարձավճարների հավաքագրումների խնդիր, որն անմիջականորեն առնչվում է սուբսիդիաների հետ: Խնդիրը կայանում է նրանում, որ բացի քաղաքական նպատակներով ցածր սահմանված սակագնի արդյունքում ձեռնարկություններին օժանդակելու անհրաժեշտությունից, ցածր հավաքագրումների արդյունքում ձեռնարկությունները չէին կարող ապահովել նույնիսկ սահմանված մուտքերը, որի արդյունքում ձևավորվում էին հսկայական պարտքեր:

Քանի որ այդ պարտքերի վերադարձը նման դեպքերում հիմնականում անհավանական է թվում, ապա վերջիվերջո այդ պարտքերի բեռն ընկնում է պետության վրա՝ հատկապես հաշվի առնելով, որ այդ ձեռնարկություններն այդ ժամանակ դեռևս պետական էին: Այսպես, ձևավորվում են թաքնված սուբսիդիաներ, որոնք մի օր անպայման պետք է ստանան դրամական արտահայտություն և վճարվեն բյուջեի կողմից: Սրա վառ օրինակն է 1999 թվականին Էներգետիկայի համակարգին Կառավարության մոտ 17 միլիարդ դրամի չափով տրամադրած սուբսիդիան, որն այն ժամանակվա ՀՆԱ-ի 1.7 տոկոսն էր կազմում (այդ կտրվածքով համարժեք լինելով այսօրվա մոտ 50 միլիարդ դրամին): Սուբսիդիան համակարգին հնարավորություն կտար մարել իր հիմնական պարտքերը, որոնք կուտակվել էին անցած տարիներին: Կարելի է պնդել, որ այդ 17 միլիարդ դրամը որպես սուբսիդիա տրամադրվեց վարձավճարները նախատեսվածից պակաս մուծողներին: Թաքնված սուբսիդավորման առանձնահատկությունն այն է, որ այն սկզբնական ընթացքում ակնհայտ չէ, հանրային ռեսուրսների կարիքը չի զգացվում, բայց մի պահի այդ խնդիրն անպայման առաջ է գալիս՝ պահանջելով համապատասխան բյուջետային միջոցներ:

Սեփականաշնորհումը որպես սուբսիդիաների վերացման հիմնական ճանապարհ

Հայաստանում թե՛ ակնհայտ և թե՛ թաքնված սուբսիդավորման վերացումն ընթացել է հիմնականում սեփականաշնորհման միջոցով: Խնդիրը կայանում է նրանում, որ սուբսիդավորման փաստը կապված է եղել ծառայություն մատուցող ձեռնարկության սեփականության ձևի հետ, և սուբսիդավորումը, հիմնականում թաքնված, ընթացել է պետական ձեռնարկությունների կողմից հսկայական պարտքերի կուտակման միջոցով: Շատ քիչ դեպքերում են գործել օրենքով սահմանված սուբսիդիաներ, իսկ սուբսիդիաների հիմնական զանգվածը ձևավորվել է որպես թաքնված սուբսիդիա պետական ձեռնարկությունների գործունեության վատ արդյունքում: Այս դեպքում պետական ձեռնարկությունների խնդիրներն ավտոմատ կերպով դառնում էին պետական բյուջեի խնդիրները, և ըստ էության ստացվում էր, որ պետությունը պետք է սուբսիդավորի այդ ձեռնարկությունների գործունեությունը: Այդ պատճառով էլ հիմնական դեղամիջոցը դարձավ այդ ձեռնարկությունների սեփականաշնորհումը կամ մասնավոր կառավարման հանձնումը:

Բայց այստեղ պետք է նկատի ունենալ, որ ոչ բոլոր դեպքերում է սպառողներին ցածր գին տրամադրելու համար իրականացվել այդ սուբսիդավորումը: Շատ դեպքերում եղել են ծախսածածկող սակագներ, սակայն կոռուպցիայի բարձր մակարդակի պայմաններում ծառայություններ տրամադրող ձեռնարկություններն ընկել են մեծ պարտքերի մեջ, քանի որ չեն ունեցել վարձավճարների բավարար հավաքագրում: Էլեկտրաէներգիայի բաշխման ոլորտը դրա հիանալի ապացույցն է, որտեղ, չնայած 1999 թվականից գործում էր ծախսածածկող սակագին, տարածված կաշառակերության արդյունքում համակարգը կորցնում էր հսկայական միջոցներ, որի արդյունքում շահում էր սպառողների այն խումբը, որը չէր վճարում ամբողջ սակագինը: Սա դասական իմաստով սուբսիդավորում չէ, բայց արձանագրված արդյունքները կարելի է նույնացնել նպատակային սուբսիդավորման արդյունքների հետ, երբ մարդկանց որոշ խումբ շահում է իրականացվող պրակտիկայի արդյունքում և հանրային միջոցների հաշվին ստանում է ավելի ցածր գներ: Էներգետիկայի ոլորտում այս խնդիրը լուծվեց միայն սկսած 2002 թվականից, երբ համակարգը սեփականաշնորհվեց:

Մինչև 2006 թվականը Հայաստանում եղել են սահմանափակ ծավալով սուբսիդիաներ՝ ուղղված ոռոգման համակարգին, խմելու ջրի համակարգին, հասարակական տրանսպորտին՝ հիմնականում մետրոպոլիտենին: Համեմատության համար նշենք, որ եթե 90-ականների վերջին թաքնված և ակնհայտ սուբսիդիաները Հայաստանում տարեկան կտրվածքով կազմում էին ՀՆԱ-ի 6-7 տոկոսը, ապա 2005 թվականի դրությամբ այն կազմում էր ՀՆԱ-ի 0.5 տոկոսից էլ պակաս գումար: Այս ամենն ուղեկցվել է հանրային ծառայությունների սակագների բարձրացմամբ, որը հնարավորություն է տվել մոտեցնել այս ճյուղերն ինքնածածածկման կարգավիճակին:

Կառուցվածքային բարեփոխումներ բյուջետային կայունության համար. սուբսիդիաների վերացման դասական դեղատոմսի անտեսումը

Ինչպե՞ս կարելի է գնահատել այս գործընթացը: Եթե նայենք վիճակագրությանը, ապա Հայաստանն ապահովել է հսկայական առաջընթաց բյուջետային կայունացման և ֆիսկալ անհաշվեկշռվածությունների վերացման առումով: Բայց մյուս կողմից, տեղի չի ունեցել սուբսիդիաների վերացման դասական փաթեթի կարևորագույն տարրերից մեկը, այն է՝ անարդյունավետ սուբսիդիաների փոխարինումը սոցիալական նպատակային աջակցությամբ: Այսինքն՝ սուբսիդիաների վերացումն ուղեկցվել է բյուջետային ծախսերի կամ ապառքների կրճատմամբ միայն, և հիմնականում տեղի չի ունեցել հավասարազոր փոխհատուցում բնակչության ամենաաղքատ խմբերին: Պետք է հաշվի առնել, որ թերհավաքագրումից որոշ չափով շահել են նաև աղքատ ընտանիքները: Օրինակ, 90-ականներին Հայաստանում ընդունված չէր վճարել խմելու ջրի վարձը, որի արդյունքում համակարգում ձևավորվել էին հսկայական պարտքեր: Կառավարությունը, բարեփոխումներին աջակցության, ապագայում հաշվիչ դնելու և վճարելու պայմանով, ներեց բնակչության այդ պարտքերը, ինչպես նաև մարեց ձեռնարկությունների պարտավորությունները մատակարարներին: Այսպիսով, Կառավարությունը փակեց նախկին անարդյունավետ սուբսիդավորման շղթան: Սակայն դրա արդյունքում, այսօր աղքատ տնային տնտեսությունները ստիպված են վճարել ջրի ամբողջական գինը, և պարզ չէ, թե պետությունն ինչ ֆունկցիա ունի այդ մարդկանց համար մատչելի ջուր ապահովելու

գործում: Այսինքն՝ այստեղ չի երևում բարեփոխման մյուս կարևոր բաղադրիչը՝ սոցիալական նպատակային աջակցության քաղաքականությունը:

Շատ դեպքերում կարելի է լսել, թե 1999 թվականից Հայաստանում գործող աղքատության ընտանեկան նպաստի համակարգը ծառայում է հենց այդ ամենակարիքավոր ընտանիքներին հասցեագրված սոցիալական աջակցության տրամադրման նպատակին: Բայց այստեղ առկա է մասշտաբների անհամապատասխանության մեծ խնդիր: Ընտանեկան նպաստների վրա տարեկան ծախսվում է ընդամենը ՀՆԱ-ի 1 տոկոսը և դա չի կարող համարվել սուբսիդիաների վերացման արդյունքում տարբեր հանրային ծառայությունների գների զգալի բարձրացման փոխհատուցում: Այսպես, շատ հետաքրքիր է նշել, որ ՀՆԱ-ի կառուցվածքում սոցիալական ծախսերի տեսակարար կշռով Հայաստանը գրավում է ամենավերջին տեղը ԱՊՀ երկրների շարքում: Այս ցուցանիշը գրեթե չի աճել վերջին 7-8 տարիների ընթացքում, այն դեպքում, երբ վերացվել են բավականաչափ սուբսիդիաներ և թաքնված սուբսիդիաներ առաջացնող մեխանիզմները: Այսինքն՝ պետությունը, կատարելով շատ կարևոր և ըստ ամենայնի ճիշտ ընտրություն, անցել է դրա կես ճանապարհը միայն՝ գրեթե ոչ մի կերպ չփոխհատուցելով սոցիալական աճող կարիքները:

Դա մեզ մղում է եզրակացության, որ 90-ականների կեսերից սկսված և մինչև 2000-ականների սկիզբն ընթացած կառուցվածքային բարեփոխումները և դրանց արդյունքում թաքնված և ակնհայտ սուբսիդավորման զգալի կրճատումը Հայաստանում հիմնականում պայմանավորված է եղել բյուջետային դիսցիպլինան ուժեղացնելու և ֆիսկալ անհավասարակշռության վերացման անհրաժեշտությամբ, որը հիմնականում եղել է բյուջետային սահմանափակումների արդյունք: Բարեփոխումների այս ընթացքը վկայում է, որ խնդիր չի եղել գտնելու հանրային միջոցների օգտագործման լավագույն տարբերակը, այլ պարզապես շեշտը դրվել է պետական ներկա և ապագա ծախսերի կրճատման վրա: Եթե մենք նաև դիտարկենք այն փաստը, որ վերջին 10 տարիների ընթացքում ըստ եռություն ոչ մի արմատական բարելավում չի գրանցվել պետական եկամուտների կտրվածքով, և այսօր Հայաստանում ՀՆԱ-ի նկատմամբ հարկերի կշռով Հայաստանը ԱՊՀ-ում գրավում է վերջին տեղը և ամենացածրերից է աշխարհում, ապա կտեսնենք, որ կառուցվածքային բարեփոխումների և սուբսիդիաների վերացման հիմնական մոտիվացիան հանդիսացել է եկամուտներ հավաքագրելու անկարողության պայմաններում գոյություն ունեցող բյուջետային մեծ սահմանափակումները:

Այս ենթադրությունը, կարծում ենք, հաստատվում է նաև 2006 թվականի զարգացումներով, երբ Կառավարությունը, ձեռք բերելով խոշոր արտաբյուջետային միջոցներ, դրանք որոշեց ուղղել ոչ թե բյուջեով սահմանված ընդհանուր գերակայություններին, այլ հնարավոր ամենաանարդյունավետ սուբսիդավորմանը, այն է՝ գազի սուբսիդավորումը: Սրան է նվիրված հաջորդ բաժինը:

Հայաստանում ամենավերջին զարգացումները

Անկախ անցած 15 տարիների ճանապարհից և դրա արդյունավետությունից, ակնհայտ է մի բան, որ 2005 թվականի վերջի դրությամբ Հայաստանում պահպանվել էին միայն փոքր

սուբսիդիա ոռոգման համակարգի համար, որը կազմում է ՅՆԱ-ի ընդամենը 0.3 տոկոսը, պետական կապիտալ ներդրումներով արտահայտված սուբսիդիաներ էներգետիկ հատվածում, որը աննշան չափով նվազեցնում էր էլեկտրաէներգիայի սակագինը, ինչպես նաև համեմատաբար փոքր հատկացումներ էլեկտրատրանսպորտին, հիմնականում մետրոպոլիտենին:

Սակայն 2006 թվականը նշանավորվեց սուբսիդիաների բնագավառում Հայաստանի իշխանությունների նախկին քաղաքականության գզալի փոփոխությամբ: Իշխանությունները նախաձեռնեցին երկու խոշորածավալ սուբսիդավորման ծրագիր, որոնք նախկինում նախատեսված չէին և չէին եղել քաղաքականությունների վերաբերյալ քննարկման առարկա: Խոսքը գնում է գազի սպառման համար սուբսիդավորման ծրագրի և գյուղացիական տնտեսություններին սուբսիդիաներ տրամադրելու մասին: Խիստ դժվար է միանշանակ գնահատական տալ ընդհանուր առմամբ քաղաքականության նման փոփոխությանը, քանի որ մի կողմից գործ ունենք գազի սուբսիդավորման հետ, որը մեր կարծիքով հանդիսանում է հետընթաց՝ պետական միջոցների օգտագործման արդյունավետության տեսանկյունից, իսկ մյուս կողմից գործ ունենք մանր գյուղացիական տնտեսություններին օժանդակության նախաձեռնության հետ, որը ճիշտ իրականացման դեպքում կարող է բերել ուղղակի և անուղղակի դրական արդյունքների ամբողջ հասարակության համար: Ստորև առանձին կքննարկենք այս երկու սուբսիդավորման ծրագրերը:

Գազի սուբսիդիաները

2006 թվականին իշխանությունները, որպեսզի մեղմացնեն կամ ավելի շուտ չեզոքացնեն սպառողների վրա ռուսական գազի գնի բարձրացումը, որոշեցին Հրազդանի 5-րդ բլոկի սեփականաշնորհումից ստացված միջոցներն ուղղել գազի սպառման սուբսիդավորմանը: Այդ նպատակի համար Կառավարությունը հատկացրեց մոտ 190 միլիոն ԱՄՆ դոլար:

Այս որոշումն առանձնանում է մի քանի կետերով: Այս սուբսիդիան ոչ միայն նահանջ է բարեփոխումների ուղուց, այն նաև աննախադեպ է, քանի որ անցած տարիների ընթացքում Հայաստանը երբեք չի իրականացրել նման անհասցե և մասշտաբային սուբսիդավորում: Այս սուբսիդիայի հիմնական առանձնահատկություններից կարևորն այն է, որ սուբսիդավորվում է մի ապրանք, որի սպառումը խիստ անհավասար է ըստ եկամտային խմբերի, այսինքն՝ հիմնական սպառողները ոչ-աղքատներն են, որը նշանակում է, որ այս սուբսիդիան չի կարող համարվել աղքատության կրճատման գործիք: Մյուս հանգամանքն այն է, որ սուբսիդիան տրամադրվում է շահույթ հետապնդող և ոչ պետության վերահսկողության տակ գտնվող ձեռնարկության տրամադրած ծառայությունների սուբսիդավորմանը, որը շուկայում ունի մրցակիցներ, ի դեմս էլեկտրաէներգիա արտադրողների: Մյուս առանձնահատկությունը այն է, որ սա ակնհայտ դրամական սուբսիդիա է, այլ ոչ թե թաքնված սուբսիդիա կուտակված երկար տարիների ընթացքում և այսօր ենթակա է վճարման: Այլ խոսքերով այստեղ մենք գործ չունենք քվազի-ֆիսկալ հատվածի խնդիրների հետ և այս առումով այս սուբսիդիան ունիկալ է: Եվ շատ կարևոր է նաև այն հանգամանքը, որ պետությունը չունի հստակ ծրագիր, թե ինչի համար է տալիս այս սուբսիդիան, ինչ է լինելու, երբ որ այս սուբսիդիան

դադարեցվի և արդյոք այդ սուբսիդիան երկարաժամկետ հատվածում Հայաստանին բերելու է օգուտներ, թե վնասներ:

Անդրադառնանք այս խնդիրներին առանձին-առանձին և ավելի մանրամասն: Այսօր Կառավարությունը բոլոր գազ սպառողներին փոխհատուցում է գազի սակագնի մի որոշ մասը՝ 25 դրամ փոքր սպառողների, հիմնականում տնային տնտեսությունների սպառած 1 խորանարդ գազի դիմաց, որը կազմում է գազի գնի մոտ 30 տոկոսը, և մոտ 50 դոլար մեծ սպառողների կողմից սպառված յուրաքանչյուր 1000 խորանարդ մետր գազի դիմաց, որը ևս կազմում է գազի գնի մոտ 1/3-ը: Այսինքն՝ պետությունը բոլոր սպառողների գազի ծախսերի մոտ 1/3-ը վերցրել է իր վրա և դա անում է հանրային միջոցների հաշվին: Ինչպես նշեցինք, այդ նպատակի համար տարեկան կծախսվի մոտ 70 միլիոն ԱՄՆ դոլար:

Հիմա տեսնենք, թե ինչպես է բաշխվում այդ 70 միլիոն դոլարը: Նախ նշենք, որ այն բաշխվում է երկու հիմնական հոդվածներով՝ գազի և էլեկտրաէներգիայի սպառման ճանապարհով, քանի որ Հայաստանում էլեկտրականության մոտ 30 տոկոսն արտադրվում է գազով, և գազի սուբսիդավորված գինը փոքրացնում է նաև էլեկտրաէներգիայի գինը, և էլեկտրականություն սպառողները ևս օգտվում են գազի սուբսիդավորումից: Թվում է այս շղթան կարելի շարունակել և ներառել այլ ապրանքներ, որոնց արտադրության կազմում գազի դերը մեծ է: Սակայն իրականում դա այնքան էլ ճիշտ չի լինի, քանի որ այլ ապրանքների դեպքում տնտեսվարողները կամ սպառողները կարող են փոփոխել իրենց վարքագիծը և անցնել այլ ապրանքների սպառման: Այսինքն՝ սպառողի սուբսիդավորումը տեղի է ունենում հենց գազի և էլեկտրականության ցածր գնի միջոցով: Իսկ արդեն մյուս փուլի ապրանքների դեպքում, շահողները ոչ թե սպառողներն են, այլ այդ ապրանքներ արտադրողները, որոնք էժան գազի կամ էլեկտրականության միջոցով կարողանում են պահել իրենց դիրքերը ներքին և արտաքին շուկայում:

Այս տրամաբանության հիման վրա կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ բնակչությունը ստանում է սուբսիդիաների ընդհանուր գումարի մոտ 40 տոկոսը, իսկ մնացած 60 տոկոսը տրվում է մասնավոր ձեռնարկություններին: Ընդ որում, խիստ հատկանշական է, որ աղքատ տնային տնտեսություններին հասնում է ընդամենը ամբողջ սուբսիդիաների 5 տոկոսը, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ աղքատների տեսակարար կշիռը գազի և էլեկտրականության մեջ շատ փոքր է, իսկ տվյալ դեպքում փողը ստանում է նա, ով որ շատ է սպառում: Սա ցույց է տալիս, որ այս սուբսիդիան ոչ մի առնչություն չունի աղքատության կրճատման հետ և իր բնույթով աղքատամետ չէ, քանի որ աղքատության հաղթահարումը որպես գերագույն նպատակ հռչակած երկրում, սուբսիդիաների ընդամենը 5 տոկոսն է բաժին հասնում աղքատ բնակչությանը: Հիմնական գումարները բաժին են հասնում խոշոր գործարարներին, որոնք ունեն էներգիայի մեծ սպառում պահանջող բիզնեսներ, ինչպես օրինակ ցեմենտի, մետալուրգիական և քիմիական ձեռնարկությունները: Շատ ավելի տրամաբանական կլիներ ընդհանրապես սուբսիդիաները չտրամադրել և ազատված տարեկան 70 միլիոն դոլարն ուղղել ազգի սոցիալական և զարգացման խնդիրներին:

Մյուս կարևոր հանգամանքն այն է, որ հսկայական միջոցներ ուղղվում են մի անորոշ նպատակի, որը ձևակերպված չէ Հայաստանում գործող և ոչ մի ռազմավարական ծրագրով: ԱՅՌԾ-ով կամ ՄԺԾԾ-ով նախատեսված չեն եղել նման սուբսիդիաներ, երկրի Ազգային

Ժողովը չի մասնակցել այս որոշման կայացմանը, իսկ Կառավարությունը, որը կայացրել է սույն որոշումը և, սեփականաշնորհման գումարները տեղափոխելով Պաշտպանության նախարարության արտաբյուջետային հաշվին, սկսել է տրամադրել այս սուբսիդիաները, ոչ մի կերպ չի ներկայացրել այս որոշման հիմնավորվածությունը և ապագա քայլերը:

Հայտնի է, որ այս սուբսիդիաների արդյունքում Հայաստանի ո՛չ սպառողները և ո՛չ էլ գործարարները չզգացին գազի թանկացումը: Բայց դա միայն առաջին հայացքից է դրական գործոն թվում: Ինդիքը կայանում է նրանում, որ Կառավարությունը գտել է միայն 3 տարվա ֆինանսավորում: Փաստորեն, 2009 թվականին արդեն չեն լինելու նման գումարներ և սպառողները ստիպված վճարելու են ամբողջ գինը: Բայց կարևոր է այն, որ ռուսական գազի ներկայիս գինը գործելու է մինչև 2008 թվականի ավարտը, որից հետո բարձրանալու է նաև այդ գինը, որը համընկնելու է սուբսիդիաների վերացման հետ: Տարբեր հաշվարկներով այդ պայմաններում բնակչությանը մատակարարվող գազի գինը կդառնա 1 խորանարդ մետրի դիմաց 120-ից 130 դրամ, ներկայի փաստացի 59-ի դիմաց, իսկ խոշոր սպառողների համար այն կարող է կազմել մինչև 300 ԱՄՆ դոլար, ներկայի փաստացի 100-ի փոխարեն: Այսինքն՝ պետությունը «արջի ծառայություն» է մատուցում գազ սպառողներին, սուբսիդավորելով գազի սպառումն այն ժամանակ, երբ գինը դեռևս համեմատաբար էժան է, և ստիպված կլինի վերացնել սուբսիդավորումն այն ժամանակ, երբ գինն իրականում ավելի բարձր է լինելու:

Այսօր այս առումով Կառավարության ծրագրի բացակայության պայմաններում, սպառողները չեն պատկերացնում, թե ինչպիսի գազի գներ կունենան 2009 թվականից հետո: Շատերը հույս ունեն, թե իրենք միշտ կունենան էժան գազ: Բայց դա հնարավոր կլինի միայն այն դեպքում, երբ Ռուսաստանը չբարձրացնի գազի գները 2009 թվականին, որը անհավանական է թվում, կամ էլ եթե Կառավարությունը որոշի շարունակել սուբսիդավորումը, որը ևս անհավանական է թվում, քանի որ միջազգային ֆինանսական դոկոր կառույցներն ըստ ամենայնի ևս մեկ անգամ աչքերը չեն փակի միջոցների նման անարդյունավետ օգտագործման փաստի վրա, այն դեպքում, երբ իրենք Հայաստանին տրամադրում են աղքատ երկրների համար նախատեսված գրեթե անտոկոս վարկեր: Արդյունքում, ներկայում իրականացվող շատ ներդրումներ, որոնք հաշվարկված են գազի էժան գների համար, կդառնան տևտեսապես անարդյունավետ, որը Հայաստանի նման երկրների դեպքում անթույլատրելի վատնում է, նույնիսկ եթե դա կատարվել է մասնավոր սեկտորի կողմից և իրենք են կրելու դրա ռիսկերը: Փաստորեն ստացվում է, որ Կառավարության ընդունած պատահական, այսինքն՝ իր ռազմավարությանը հակասող, ժամանակավոր և չշարունակելի որոշման արդյունքում, երկարաժամկետ հատվածում լուրջ վնասներ կարող է հասցվել երկրի տնտեսությանը և գործարար միջավայրին:

Այստեղ նաև կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ անցած տարիների ընթացքում, լավ թե վատ, սպառողներն ընդունել էին այն փաստը, որ սուբսիդիաներ չեն լինելու, և իրենք պետք է ամբողջովին վճարեն իրենց կողմից սպառվող ապրանքների և ծառայությունների գինը: Գազի սուբսիդիաների տրամադրման Կառավարության վերջին որոշումը փաստորեն զգալիորեն վտանգում է այս հասարակական կոնսենսուսը, որը նշանակում է, որ ապագայում խիստ մեծանում է երկրում որևէ բարեփոխում անելու, ներառյալ նաև այս սուբսիդիան դադարեցնելու քաղաքական գինը:

Որպես այս հատվածի ամփոփում, կարելի է նշել, որ Կառավարության վերջին որոշումը կարող է հանդիսանալ այն բանի ցուցանիշ, որ 90-ականների և 2000-ի սկզբների բարեփոխումները հիմնականում կատարվել են բյուջետային միջոցների խիստ սահմանափակության արդյունքում, երբ, ըստ էության, այլ ելք իշխանությունները չեն ունեցել: Այլ կերպ ասած, դա ոչ թե իշխանությունների բարեփոխիչ կամքի արտահայտություն է եղել, այլ, ըստ էության, պարտադրված քայլ: Փաստորեն վերջին տարիներին բյուջետային ռեսուրսների մեծացման արդյունքում Կառավարությունը կատարել է հսկայական շրջադարձ և ընդունել է այնպիսի որոշում, որի մասին մի քանի տարի առաջ դժվար կլիներ նույնիսկ պատկերացնել: Այս հանգամանքը պարունակում է զգալի վտանգներ բարեփոխումների հետագա ընթացքի առումով, քանի որ կարճաժամկետ կամ միջին ժամկետ հատվածում տնտեսական աճի արագացումը բերում է հանրային ավելի մեծ ռեսուրսների, որը, նման անհեռանկարային օգտագործման դեպքում լուրջ վնաս կհասցնի երկրի երկարաժամկետ հեռանկարին:

Գյուղատնտեսության սուբսիդավորումը

2006 թվականին Կառավարությունը որոշում կայացրեց նախաձեռնել գյուղատնտեսական գործունեության խոշորածավալ սուբսիդավորում: Այդ ծրագիրը նախատեսում է արդեն 2008 կամ 2009 թվականից սկսել տրամադրել որոշակի գումարներ փոքր գյուղացիական տնտեսություններին: Սուբսիդիայի գումարը պետք է կազմի տարեկան 35000 դրամ՝ յուրաքանչյուր 1 հեկտար մշակվող հողի դիմաց: Այս սուբսիդիայի իմաստը կայանում է նրանում, որ պետությունը խթանում է անմշակ հողերի մշակումը փոքր տնտեսությունների կողմից՝ միաժամանակ բարձրացնելով այդ փոքր տնտեսությունների մրցունակությունը: Ներկայում Զայաստանի մի շարք մարզերում իրականացվում է այս ծրագրի փորձնական փուլը, և նախատեսվում է, որ մեկ կամ երկու տարուց Կառավարությունը կսկսի սուբսիդավորել Զայաստանի մոտ 330 հազար մանր գյուղացիական տնտեսություններին:

Ի տարբերություն վերը քննարկված գազի սուբսիդավորմանը, գյուղատնտեսական նման սուբսիդիաներն ընդհանուր առմամբ չեն հակասում բարեփոխումների տրամաբանությանը, հատկապես եթե հաշվի առնենք, որ խնդիր է դրված նպաստելու այն գյուղատնտեսական հողերի մշակմանը, որոնք նախկինում չեն մշակվել: Սա արդեն հանդիսանում է Զայաստանի համար ռազմավարական հստակ խնդիր, որը հասարակական օգուտներ է բերելու Զայաստանին: Մյուս կողմից սա նպաստելու է գյուղացիների մրցունակության աճին, որը ևս հասարակական օգուտներ է ենթադրում, քանի որ այս դեպքում Զայաստանում տեղի չի ունենա անհավասար պայմաններով հողերի կենտրոնացում խոշոր տնտեսությունների ձեռքում, որը երկրի զարգացման տեսանկյունից խիստ անցանկալի երեւույթ է հանդիսանում: Մյուս կողմից, պետք է հաշվի առնել, որ Առևտրի միջազգային կազմակերպությանն անդամագրվելու արդյունքում և դրանով նախատեսված աստիճանական միջոցառումների արդյունքում Զայաստանը շուտով կմտնի մի նոր փուլ, երբ ավելի ուժեղ կզգացվեն գյուղատնտեսական ապրանքների շուկայում միջազգային մրցակցության ճնշումները և այդ պայմաններում նման սուբսիդավորման ծրագիրը հանդիսանում է թույլատրելի և չափավոր արձագանք այդ նոր մարտահրավերներին:

Այնուամենայնիվ, դեռևս վաղ է ամբողջական գնահատական տալ այս ծրագրին, քանի որ կան մի շարք գործոններ, որոնց հաշվի չառնելը կարող է արժեզրկել այս միջոցառման կարևորությունը և բերել պետական միջոցների վատնման: Կարծում ենք դեռևս քննարկման

առարկա պետք է լինի այն հարցը, թե արդյոք բոլոր փոքր գյուղացիական տնտեսությունները պետք է ստանան այս օժանդակությունը: Խնդիրը կայանում է նրանում, որ Հայաստանի բերրի հողերը մշակող գյուղացիական տնտեսությունները ունեն համեմատաբար բարձր եկամուտներ և այս օժանդակությունն էական նշանակություն չի ունենա իրենց համար և արդյունքում, կհանդիսանա պետական միջոցի վատնում: Օրինակ, եթե ենթադրենք, որ երկրի փոքր գյուղացիական տնտեսությունների մոտ 20 տոկոսը կարիք չի ունենա նման օգնության, ապա կարելի է սուբսիդավորման բյուջեն կրճատել այդ 20 տոկոսով, որը կկազմի տարեկան կտրվածքով 2-3 միլիարդ դրամ:

Կան նաև մի շարք կարևոր խնդիրներ, ինչպիսին են այդ սուբսիդիաների տրամադրման մեխանիզմները: Քանի որ սա մասնավոր սեկտոր - պետական բյուջե հարաբերությունների դաշտում է գտնվում, ապա առկա է մեծագույն ռիսկ կոռուպցիայի դրսևորման համար: Շատ հնարավոր է, որ շատ շուտով արհեստականորեն, այսինքն՝ «թղթի վրա» աճի մշակվող հողատարածքների ցուցանիշը, որը հնարավորություն կտա ավելի շատ սուբսիդիա ստանալ պետական բյուջեից: Նման հնարավոր զարգացումների կանխումը խիստ կարևոր է այս ծրագրի արդյունավետության համար: Այս ծրագրի արդյունավետության վրա կարող է ազդել նաև հողի շուկայի ներկայիս անկատար վիճակը, երբ տեղի են ունենում հողերի վարձակալման բազմաթիվ գործարքներ, որոնք պաշտոնապես չեն ձևակերպվում: Այս դեպքում կառաջանան կոնֆլիկտներ սուբսիդիաների տրամադրման ժամանակ, քանի որ սուբսիդիան պետք է տրամադրվի հողը մշակողին, որը տվյալ դեպքում ոչ մի հիմք չունի պնդելու թե ինքն է իրական հողօգտագործողը: Մյուս կողմից, կան հողօգտագործողներ, որոնք, վարձակալելով բազմաթիվ հողակտորներ, այլևս չեն հանդիսանում փոքր գյուղացիական տնտեսություն, և այս դեպքում այս հողակտորների պաշտոնական տերերին կամ իրական հողօգտագործողին տրամադրված սուբսիդիաները կհանդիսանան պետական միջոցների անտեղի վատնում:

Ինչևէ, չնայած այս տեխնիկական խնդիրներին, մի բան ակնհայտ է, որ այս ծրագիրն ունի հստակ ռազմավարական հիմնավորում, և եթե հասարակությունը դա համարում է բյուջետային գերակայություն, ապա դա կարելի է իրականացնել՝ չվտանգելով երկրում բարեփոխումների հետագա ընթացքը: Շատ կարևոր հանգամանք է նաև այն, որ այս ծրագրից պետք է որ շահեն բացառապես մանր գյուղացիական տնտեսությունները և կարելի է ենթադրել որ միջոցների բաշխումն ավելի աղքատամետ կլինի: Նույնը չի կարելի ասել գազի սուբսիդավորման ծրագրի վերաբերյալ, որը, ինչպես նշվեց վերևում, հակասում է սկզբունքային այս բոլոր փաստարկներին:

Սուբսիդիաների խնդիրը ԱՅՌԾ վերանայման գործընթացում

2003 թվականի ընդունված ԱՅՌԾ-ն, որը, ըստ էության, փոխարինում է Հայաստանի տնտեսական ռազմավարությանը և հիմնականում նկարագրում է Հայաստանում իրականացվող տնտեսական քաղաքականությունը, ներառյալ նաև հանրային միջոցների օգտագործման գերակայությունները, մասնավոր սեկտոր - պետություն փոխհարաբերությունները, սոցիալական աջակցության ուղղությունները, գտնում ենք, որ տալիս է Հայաստանի համար ամենաօպտիմալ մոտեցումները: Ըստ այդմ, 2004-2015 թվականներին պետք է բացառվեն ընդհանուր սուբսիդիաները և պետք է կատարելագործվեն սոցիալական նպատակային աջակցությունը: ԱՅՌԾ բյուջետային շրջանակը ևս չի

Նախատեսել ոռոգման համակարգին տրվող սուբսիդիաներից բացի այլ խոշոր սուբսիդիաներ: Միակ բացառությունը թերևս կարող է հանդիսանալ մանր գյուղացիական տնտեսության սուբսիդավորման ծրագիրը, որը հաջորդ ԱՅԴ-ում ամրագրվելու համար պետք է անցնի հասարակական լայն քննարկման փուլ և ենթարկվի բազմակողմանի վերլուծության:

Այստեղ թերևս հարկ կա նշելու, որ անցած 15 տարիների ընթացքում սուբսիդիաների վերացման արդյունքում առաջացած հսկայական սոցիալական բեռը միայն փոքր մասով է փակվել նպատակային սոցիալական աջակցության միջոցով: Ամբողջովին ընդունելով ԱՅԴ-ում ամրագրված սուբսիդիաների քաղաքականության տրամաբանությունը՝ կարծում ենք, որ գործող ԱՅԴ-ն բավականաչափ միջոցներ չի նախատեսել 2004-2015 թվականներին սոցիալական և զարգացման ռիսկերի մեղմացման մասով, հատկապես եթե հաշվի առնենք մինչև 2004 թվականն առաջացած այն հսկայական ուշադրության դեֆիցիտը երկրի սոցիալական խնդիրներին, որն այսօր արտացոլվում է երկրում առկա թույլ սոցիալական կապիտալով, թույլ քաղաքացիական կազմակերպվածությամբ և թույլ համայնքներով: Այս բացը որոշակի չափով կարող է լրացվել Կառավարության նախաձեռնած փոքր գյուղացիական տնտեսությունների սուբսիդավորման միջոցով, բայց այստեղ ևս անհրաժեշտ է դրսևորել առավելագույն զգուշություն, որպեսզի ծրագիրը չվերածվի կոռուպցիայի աղբյուրի:

ԱՅԴ վերանայման ընթացքում թերևս շատ կարևոր է անդրադառնալ նաև անցած տարիներին, հատկապես 2006 թվականին, իշխանությունների կողմից ԱՅԴ-ում արձանագրված մի շարք կարևորագույն սկզբունքների ոտնահարմանը, որը երկրին տեղափոխել է ինստիտուցիոնալ մի նոր, ավելի ցածր մակարդակ: Այսօր կարելի է փաստել, որ գազի սուբսիդիաների մասով Կառավարության վերջին քայլերը հակասում են ինչպես ԱՅԴ-ի բյուջետային շրջանակին, այնպես էլ, տրամաբանությանը, որը թերևս ավելի ցավալի և վտանգավոր է: Բացի նրանից, որ ՀՆԱ-ի 1 տոկոսի չափով գումար է հատկացվել ԱՅԴ-ով չնախատեսված գազի ընդհանուր սուբսիդավորման վրա, խախտվել է նաև սահմանափակ միջոցների օգտագործման վերաբերյալ ԱՅԴ աղքատակենտրոն տրամաբանությունը:

Այս իրավիճակը կարող է վտանգավոր լինել նրանով, որ Հայաստանում տնտեսական ընդլայնման արդյունքում ռեսուրսների սակավության մեղմացումը, փաստորեն կարող է հանգեցնել քաղաքականությունում անարդյունավետ և աղավաղող տարրերի մեծացմանը, որը, ըստ երևյալի, կարծեգրկի անցած տարիների բարեփոխումների համար ժողովրդի կողմից կատարած սոցիալական զոհաբերությունը: Հայաստանը մտնում է մի փուլ, որտեղ մի կողմից ռեսուրսների սահմանափակությունն այլևս այնպիսի ծանր խնդիր չէ, ինչպես նախկինում, իսկ մյուս կողմից, այդ ֆոնի վրա որոշումների կայացումը դառնում է ավելի ու ավելի կամայական, ոչ մասնակցային և հակասող երկրի կարևորագույն ռազմավարությանը:

Առաջարկություններ ԱՅԴՎ վերանայման ընթացքում սուբսիդիաների և դրա հետ կապված այլ կարևոր խնդիրների նկատմամբ անհրաժեշտ մոտեցումների վերաբերյալ

ԱՅԴՎ վերանայումը լավ հնարավորություն է հանդիսանում կարևորագույն ճշգրտումները մտցնել երկրի ռազմավարությունում, ինչպես նաև բացահայտել այն թերացումները, որոնք եղել են ԱՅԴՎ-ի իրականացման ընթացքում՝ 2004-2006 թվականների ընթացքում:

Ինչպես տեսանք նախորդ բաժիններից, բարեփոխումների ընթացքում Հայաստանում իրականացված սուբսիդիաների կրճատման քաղաքականության, այսինքն՝ սուբսիդիաների կրճատման հիմնական բացթողումը եղել է այն, որ այն պայմանավորված է եղել հիմնականում բյուջետային սահմանափակումների նկատառումներով, այլ ոչ թե տնտեսական արդյունավետության և բյուջետային միջոցների առավել նպատակային օգտագործման գերակայությամբ, որի արդյունքում սուբսիդիաների զգալի կրճատումը չի բերել հանրային միջոցների բազայի ընդլայնման և դրա միջոցով սոցիալական աճող կարիքների որոշակի չեզոքացման: Հայաստանում կուտակվել են չհասցեագրված հսկայական սոցիալական խնդիրներ, որոնք ահռելի վտանգ են ազգային անվտանգությանը: Այդ առումով գտնում ենք, որ ԱՅԴՎ վերանայումը պետք է անպայման անդրադառնա այս խնդիրներին, և սահմանի այնպիսի նոր բյուջետային շրջանակ, որտեղ ավելացված սոցիալական ծախսերը կլինեն այն օպտիմալ մակարդակում, որտեղ կբալանսավորվի ազատ տնտեսությունը և սոցիալական համերաշխությունը, տնտեսական աճից կարճաժամկետ ակնկալիքները և երկրի զարգացման երկարաժամկետ հեռանկարը, անձնական պատասխանատվությունը և հանրային բարիքները: Դա վերաբերում է կրթության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերին, որոնք ԱՅԴՎ գործող տարբերակի համեմատ վերանայված տարբերակում պետք է անպայման ունենան ՀՆԱ-ի նկատմամբ ավելի բարձր մակարդակ:

Մյուս կարևոր խնդիրն այն է, որ գազի սուբսիդավորման արդյունքում 2006 թվականին արձանագրվել է հսկայական շեղում ինչպես ԱՅԴՎ-ից, այնպես էլ Կառավարության մինչ այդ իրականացրած քաղաքականությունից, որը հանգեցնում է հսկայական միջոցների աննպատակահարմար օգտագործմանը և շահում են հիմնականում ոչ աղքատները, և հատկապես շատ հարուստները, որոնք ունեն էներգատար բիզնեսներ: Անհրաժեշտ է ԱՅԴՎ վերանայման գործընթացում վերլուծել այն քաղաքա-տնտեսական մոտիվացիան, որը հանգեցրել է նման որոշումների: Եթե կան այդ որոշումների արդյունավետությունը հիմնավորող փաստարկներ, որը քիչ հավանական է թվում, ապա պետք է համապատասխան փոփոխություններ կատարել ԱՅԴՎ փաստաթղթում՝ տալով ժամանակի փորձությամբ անցած միջոցառումների արդյունավետության հիմնավորում: Հակառակ դեպքում, այսինքն, եթե վերլուծությունների արդյունքները ցույց տան, որ ԱՅԴՎ-ից շեղումները չեն հիմնավորվում տնտեսական և սոցիալական քաղաքականության մեջ աղքատակենտրոն ճշգրտումներ անելու անհրաժեշտությամբ, պետք է ավելի հստակեցվի Հայաստանի բյուջետային շրջանակը՝ նման կամայական շեղումներից խուսափելու համար, և դրվեն հստակ քաղաքական սահմանափակումներ: